

փրկափայ Պլուտինին եկեղեցւոյ հայրերից
աւարներէ կարողանալու՝ երեւելի զիտնական-
ներ են ևւ նոցա գրած իւրաքանչիւր տողը զուտ
ճշմարտութիւն — ևւ կամ՝ ընդունել ընդ միշտ
որ աւետարանը հասկացող, նորա ճշմարտու-
թիւններին հաւատացող ևւ իւր կոչման վե-
րաբերնալ բոլոր պարտականութիւնները կա-
տարելու պատրաստ անձը միայն կարող է
հոգեւորական լինել: Միջին ճանապարհ չկայ:
— Թո՛ղ համոզուած լինին մեր երիտասարդ
ուսումնական քահանայները, որ ուսման ևւ
պարգեւների փայլը նոցա ոչինչ չի օգնի
եթէ պակասում է իսկական հոգեւորականին
փայլը առաքինութեան փայլը ևւ հմտութիւնը:
որ ջերմ՝ հաւատով ևւ լուրջ աշխատութեամբ
է ձեռք բերուում՝ ս. Գիրքը՝ իւր կոչման
վերաբերնալ պարտականութիւնները ևւ իւր
յօտի պէտքերը լրջօրէն ուսումնասիրելով:



ՀԵՐԵՒԱՆՅԻ ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ.

Կարեւոր ենք համարում «Նոր-Գարեի խմբա-
գրութեան հրատարակելու» քան ապագայութեան
յանձնելը վարք ինչ աւելի ուշադրութեամբ քննե-
լու իրեն ուղարկուած թղթակցութիւնների ար-
ժանահաւատութիւնը, երբ խօսքն այնպիսի հաւա-
տատութեան մասին է, որպիսին է Մայր Աթոռի
Ճեմարանը, Թէ որչափ բարեկեղծ անձն է նորա
«Մարտի» կեղծ անուան ներքոյ թաղեալ թըր-
թակիցը՝ այդ ստուգելու համար բաւական է
յիշել, որ նա չի խղճահարուում Գերմանիայում
5 1/2 տարի փրկափայութիւն ևւ աստուածաբա-
նութիւն ուսած ևւ Բոննի համալսարանում սո-
սուածաբանութեան կանդիդատի քննութիւն
առած մի երիտասարդի համար առել, թէ
«չգիտէ, որ լեւան քաղաք ու Գրեթ թէ ուրեշ
դրքերի մէջն է, սաղմոսների Մովսիսի է համա-
րում»: Պ. Ա. Տէր Գասպարեան ճեմարան է հրա-
ւերուել միմիայն մատենադարանապետի պաշտո-
նով՝ ապագային թողնելով որդելի թէ ուրեշ ինչ
գործեր կկարողանայ նա կատարել: Ամէն քարե-
կիղմ ահանատեն կիկայէ, որ նա ամենայն բարե-
խղճութեամբ կատարում է իւր պաշտօնը ևւ ար-
դէն իսկ շատ զեղեցիկ կերպով կարգի քնուած մատենա-
դարանի գրեական նոր ցուցակագրութիւնը վերջա-
ցնելուց յետոյ՝ անում է այն, ինչ որ կանէր ու-

րեշ որ և է մատենադարանապետ: «Ընդհանուրի
խօսակցութեան առարկայ ս. Էջմիածնում» նա
երբէք չի եղել: Խօսակցութեան առարկայ դար-
ձնել նորան ևւ «անարդարութիւն ևւ անարեւելադ-
նութիւն» կամ «տղեղ երևոյթ» համարել ճեմա-
րանի վարչութեան վարմունքը՝ որ մի համալսա-
րանաւարտ երիտասարդի (չառ լաւ տեղեակ թէ
«ո՞վ է նալեանդեանը՝ նաղարեանը, Բաթիկին» ևւ
նայնչափ ձեռնհաս աշակերտների ընթերցանու-
թեան առաջնորդ հանդիսանալու, որչափ մի այլ
օտար դպրոցներում ուսած համալսարանական)
400 Բ. ուսկով պաշտօնի է հրաւիրել — կարող է
այնպիսի մէկը միայն, որ դժուարանում է բժշկանէլ,
կամ որի հաշուին չի գալիս երբ մի համալսա-
րանաւարտ այդպիսի շնչին ուսկով ծառայելու
ևւ ապա գիւղի դպրոցում ձրի դասեր տալու
միամտութիւնն ունի: — Ինչ վերաբերում է ճեմա-
րանի «առանց պարապելու մնացած» դասերին՝
թող ո՞չ որ հող չանէ այդ մասին. կրօնի մի քանի
դասեր մի երկու շաբաթ (որի վերայ եթէ աւե-
լացնենք արձակուրդի երկու շաբաթը ևւ կրկնա-
պատկենք՝ կլինի «երկու ամիս») պարապ մնացին
միայն այն պատճառաւ, որ իմ անակընկալ բա-
ցակցութիւնն արդէլք եղաւ վաղօրօք հոգալու
նոցա համար, ծննդեան տօներից յետոյ նորա
բաժանուեցան իմ ևւ իմ ընկեր Գարեգին վար-
դապետի մէջ, ևւ այլ ևւ պարապ դաս չկար:
Կարելի է վերջապէս, ևւ որտե՞ղ է ընդունուած
մի դպրոցի ներքին կեանքին վերաբերեալ այս-
պիսի մանր խնդիրներ լրագրութեան նիւթ դար-
ձնել: — Ճեմարանը մի երկու տասնեակ հանդէսներ
ևւ զրական երեկոյթներ է ունենում տարուայ
մէջ, որոնք մեծ մասամբ ընտանեկան բնաւորու-
թիւն ունին ևւ մարդ դարմացնելու համար չեն:
այլ միջոց տալու համար ամէն ընդունակութեան
տէր ևւ ամէն դասարանի աշակերտի հանդէս
դալու՝ իւր գրաւոր ևւ բանաւոր աշխատութիւն-
ներով, ևւ վարժութիւն ձեռք բերելու: Արդ, ո՞վ
կարող է պահանջել, որ այդ դէպքում բոլոր
ամբիւն բարձրացողները փայլուն ճառախօսներ
լինին ևւ ըստ մեծի մասին ամէն տարի կրկնուող
նիւթերով անխտիր հետաքրքրութիւն պատճառեն
թէ ցածր դասարանի 12 տարեկան աշակերտին
ևւ թէ 22 տարեկան ուսանողին, ո՞ր ահանատեն
չգիտէ, թէ ճեմարանի արդի վարչութիւնը շատ
ջանքեր է գործ դրել այդ հանդէսներն ըստ կա-
րելւոյն արդիւնաւէտ կացուցանելու, թէ ճեմա-
րանի պ. Տեսուչը այն ժամանակ միայն քացա-
կայել է, երբ հիւանդ փակուած է եղել տանը
ևւ ուսուցիչները պարտադիր չլինելով ներկայ
գտնուելու, այլ հրաւիրուելով՝ ներկայ են եղել
մեծ մասամբ, երբ մի յարգելի պատճառ չի
արդեւել:

«Մշակի» 27-րդ հ. ում Արժ. Մեսրոպ վարդապետը յառաջ է բերել մի շարք հիմունքներ, յոյց տալու համար «Արարատ»-ի մէջ լոյս տեսած Սահաթի քննադատութեան թերութիւնները և իւր աշխատութեան ըստ արժանւոյն գնահատուած չլինելը Իդմիլեան կտակի գործադիր յանձնաժողովի կողմէն: Պարտք ենք համարում նկատել, որ յեշեալ քննադատութիւնը մեզ ուղարկել էր ոչ թէ ինքը և՛ Ազան Արծրունին, ուր ուրիշ հեղինակաւոր անձն՝ իրաւունք տալով մեզ գործադրել ըստ մեր բարեհայեցողութեան. մենք մի քանի ամիս մեր մօտ պահելուց յետոյ՝ * տպագրութեան յանձնեցինք և՛ Մեսրոպի յատուկ խնդրանաց միայն ղեկնակով, որի ցանկութիւնն էր ամբողջովին և անխտիր տպագրուած տեսնել այն որպէս զի միջոց ունենայ իւր իրաւունքը պաշտպանելու՝ և մենք արդարացի էինք դառնում այդ ցանկութիւնը: Պէտք է նկատել նաև, որ և՛ Մեսրոպի աշխատութիւնը 10 էջերով թուելը յերաւել տպագրական սխալ է լուի. թէպէտ համաձայն ենք նորա հետ որ նորա աշխատութիւնը միայն յստաջարանով գնահատել անարդար էր յերաւել և անսեղութիւն էր ասել, թէ Սահաթին եկեղ. պատմութեան արժէքը միայն մեր անդ. մատենագրութեան ինչ ինչ յիշատակարաններէ հետ առնելու թիւն ունենալու մէջն է:

Կ. Վ.

ՏԱԺԿԱՅԱՅՔ.

Արարիկի և Ակնայ առաջն. տեղապահ Ս. Մուշեղ վարդապետ զեկ. 4-ի ուրրս թ որը Ակն հասեր է թեմական գործերու կարգադրութեան համար, որմէ ետքը Ապուշեկ գացեր է ժողովուրդին հրաւիրանքով. Այս այցելութիւնը ուրախութիւն կարգադրութիւններու պատճառ եղեր է: Ապուշեկի մէջ 6—7 տարիներ է ի վեր կրօնական հերձուած մը կար՝ «Տէր Ահաճեան» անունով որուն հետեւողները եկեղեցիէն պաղած, զերեկմանատան մատրան մէջ ինքնաձեռն կը քահանայագործէին, եկեղեցական արարողութիւնները կատարելով. Այս հերձուածին ծագման ասեմ, բողոքական պատուելիներ և կաթողիկ վարդապետներ անմիջապէս վազած եկած էին Ապուշեկ՝ օգտուելու արամադրութեամբ, իսկ չէին յաջողած ընաւ. Իրենց խումբին առաջնորդին Աղմոս էֆ. Պոստանձեանի հաս-

տատամտութիւնը կրցած էր «Տէր Ահաճեան»-ն երը պահպանել կրօնափոխութենէ. Այս անգամ Մուշեղ վարդապետ խաղաղասիրական ոգիով ձեռնարկեց կրօնական այս բաժանումը վերցնել մէջտեղէն, ու այս ձեռնարկին յաջողութեանը համար առաջն. տեղապահին օժանդակեցին Աղմոս էֆ. և ուրիշներ, Ապուշեկի Ս. Յովհաննէս քահանային կողմէ եղած զիջողութիւնը և Տէր Ահաճեաններու կողմէ խոստմանգրերը ստորագրելով, Ս. Յակոբայ շարաթ երեկոյին Տէր Ահաճեանները հաւաքուեցան եկեղեցւոյ սենեակը, ուր առաջն. տեղապահ Մուշեղ վարդապետ «պահպանիչ» ըսելով անոնց վրայ, զանոնք առաջնորդեց դէպի եկեղեցի, և այս ուրախութեան ու եղբայրութեան գործը գրուածեց մասնաւոր քարոզով մը, Տէր Ահաճեաններէ շատեր խոստովանելով հաղորդուեցան միւս օր, երբ վարդապետը կը պատարագէր. Այս հաշտութեան գործը ամենուն սիրտերը հրճուանքով լեցուց. Ապուշեկի մէջ, ու գեկտ. 12-ի շարաթը յիշատակելի օր մը եղաւ նոյն զիւղի ժողովրդին համար:

— Խարբերդէն և Տիարբերիւն Պատրիարքարան հասած գրութիւններ այդ տեղերու ժողովուրդին ծայրայեղ կարօտութիւնը, յայտնած ըլլալով, Ս. Պատրիարք Հայրը թագրիրով մը կայս. կառավարութեան զթութիւնը խնդրեց անոնց անմիջական օգնութիւն հասցնելու համար:

— Խորին ցաւով կը ծանուցուի Նէնի-Գարուի Աւագերէց Ս. Խաչատուր Ա. քահանային մահը: Ծերունազարդ քահանայ, որ ժամանակէ մը հետեւ կողոնի կը ծառայէր, հոգին աւանդեց յունուար 19 առաւօտ:

Պարզ, բարեկրօն ու մարդասէր երեցի տիպարն էր հանգուցեալը, որի առանց աղմուկի, հարուստներուն կը զիմէր՝ աղքատներուն օգնելու, քաւոր աղջիկներուն օժիտ պատրաստելու, հրիւղեալ ընտանիքներու ընկարան մը ծարելու համար և այլն: Բայց իր կեանքին ամէնէն աւելի յիշատակելի անձնութեան գործն է՝ քսան տարի շարունակ Ազգ. Հիւանդանոցին հացագին հայթայթելու համար կատարած հանդանակութիւնը որ ամէն անգամ 5-6000 զրուշի կը հասներ: Այս արդիւնքն ձեռք բերելու համար ժողովրդական ամէն դասերուն կը զիմէր, թաղէ թաղ, տունէ տուն, խանութ խանութ պտտելով, Բարեկիշատակ աւագերէցը օրհնութիւններ միայն կը թողու իր ետին:

Ս. Խաչատուր քահանայն անդամ էր Արծնական ժողովին և խղճամիտ կերպով վարած էր նաև դանազան յանձնաժողովներու անդամակցութիւնը, ամէն անգամ որ Պատրիարքարանի կողմէ կառաւարկուէին իրեն:

Բարեկիշատակ Ս. Խաչատուր Ա. քահանայի օծումը և յուղարկաւորութիւնը կատարուեցաւ 21 յունուար Նէնի-Գարուի Ս. Առաքելոց

* Թող ուշադրութեան տուի այս հանգամանքը, իւր տակն շարաքարերը: